



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ**

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**«168 ԺԱՄ» ԹԵՐԹԻ և 168.AM [1] ԿԱՅՔԻ ԳԼԽԱՎՈՐ  
ԽՄԲԱԳԻՐ ՍԱԹԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆԻՆ**

**Հարգելի տիկին Սեյրանյան,**

Ի պատասխան Ձեր՝ 20.07.2021 թ. գրությանը, տեղեկացվում է, որ ՀՀ Արմավիրի մարզում իրականացվող 2020թ. սուբվենցիոն ծրագրի շրջանակներում՝ Ծաղկունք համայնքի մշակույթի տան վերանորոգման համար, Ծաղկունքի համայնքապետարանը 2020թ. հուլիսի 27-ին պայմանագիր է կնքել (ծածկագիր <<ԱՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ- 20/02>> <<Տիգրան Խաչատրյանի Մեսրոպի>> Ա/Ձ-ի հետ: Պայմանագրի արժեքը կազմել է՝ 12915144 դրամ, որից 30%-ը պետական բյուջեից, շինարարական աշխատանքների ավարտման ժամկետը սահմանված է եղել մինչև 2020թ. հոկտեմբերի 31-ը: Նույն աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն իրականացնելու համար, Ծաղկունքի համայնքապետարանը պայմանագիր է կնքել <<Սարգսյան Ղուկաս Հակոբի>> Ա/Ձ-ի հետ: Աշխատանքների ընթացքում, կապալառուի կողմից համայնքապետարան (պատվիրատու) են ներկայացվել կատարողական ակտեր.

1. 18.09.2020թ. ---- 2198020 դրամ, վճարվել է ամբողջությամբ:
2. 02.12.2020թ. ---- 3893800 դրամ, վճարվել է ամբողջությամբ:
3. 02.12.2020թ.----- 2946800 դրամ, վճարվել է ամբողջությամբ:

Աշխատանքները ավարտելու վերաբերյալ, պատվիրատուն կապալառուի կողմից այլ փաստաթղթեր չի ստացել (համադրման, կատարողական ակտեր ): Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալը ամբողջությամբ կատարված չէ: Ըստ համայնքի ղեկավարի պարզաբանման՝ իրականացված աշխատանքները անորակ են, որի պատճառով սուբվենցիոն ծրագրով պետության մասնակցության գումարի ամբողջ չափաբաժինը չի վճարվել:

**Հարգանքով՝**

**Հ.Մաթևոսյան**

Կատ.՝ Գ.Հովհաննիսյան

23.07.2021

X 

VERIFIED OCSP 23.07.2021 12:31:27 GMT+4

Հ. Կուրդիյան  
0237-2-13-77

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230